

PEARLS OF ARMENIAN HERITAGE

Սուրբ Աբգար Թագաւոր



Image by [Rosary Team](#)

Մովսէս Խորենացի պատմիչէն մեզի հասած է այն՝ թէ Եդեսիոյ Աբգար Թագաւորը իմանալով Քրիստոսի Սուրբ Երկրի մէջ կատարած հրաշագործութիւններուն մասին, կը հաւատայ իր Աստուծոյ Որդի ըլլալը: Արշամի որդի Աբգարը՝ հայոց թագաւորն էր, որ քաղաքական պայմաններէ ելլելով իր արքունիքը տեղափոխած էր Եդեսիա: Մեզի պատմութենէն հասած է այն, որ Աբգար թագաւոր անբուժելի հիւանդութենէ մը կը տառապէր: Քրիստոսին նամակ մը կը դրկէ եւ անկէ կը խնդրէ իր քաղաքը գալ բժշկելու համար զինք եւ այնտեղ ապրելու: Քրիստոս կը պատասխանէ, որ ինք պէտք է կատարէ իր առաքելութիւնը եւ անկէ ետք իր աշակերտներէն մէկը կը դրկէ՝ բժշկելու Աբգար թագաւորը եւ յափտենական կեանքի ատեմիսը փոխանցելու: Երբ Աբգար թագաւորին սուրհանդակը Եդեսիա կը վերադառնայ՝ Քրիստոսի պատասխանին հետ նաեւ կը բերէ Յիսուսի անձեռակերտ

սրբապատկերը, որ Տիրոջ դէմքի հպումով տպուած էր դաստառակի մը վրայ:

Քրիստոսի համբարձումէն ետք, իր առաքելներէն Սուրբ Թադէոսը Եդեսիա կ'երթայ եւ կը բժշկէ Աբգար թագաւորը եւ քաղաքի բոլոր հիւանդները: Այնտեղ կը քարոզէ ատետարանը եւ Քրիստոսի մասին կը պատմէ անոնց: Բոլոր բնակիչները դարձի կու գան Քրիստոսը ընդունելով եւ կը մկրտուին: Ասկէ ետք Ս. Թադէոս առաքելը կ'ուղղուի դէպի Յայաստան բարի լուրը ատետելու Աբգար թագաւորի ազգականին՝ Սանատրուկին:

Աբգար թագաւոր դեռ Քրիստոսի ներկայութեան ճանչցաւ եւ ընդունեց իր Աստուծոյ Որդի ըլլալը: